Պայմանագիր ՇՀ-ԳՄԳ-ՄԳՕԶԲ-18/10

ծառայությունների մատուցման

ք. Երևան «17» մարտ 2018թ.

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, հետագայում «Պատվիրատու», ի դեմս համայնքի ղեկավար Մ.Ղարաքեշիշյանի, որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ն, հետագայում՝ Կատարող, ի դեմս գլխավոր տնօրեն Հ.Անտոնյանի, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ՝ «Կողմեր», կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնում է հիմնական միջոցների գույքագրման և իրական արժեքի գնահատման աշխատանքներ 31.12.2017թ. դրությամբ՝ համաձայն ներկայացված ցանկի, այսուհետ Գույքագրման և Գնահատման աշխատանքներ: Գույքագրման և Գնահատման աշխատանքները կատարվում են հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու նպատակով՝ համաձայն հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին:

2. Վարձավճարը և վճարման ժամկետները

2.1 Սույն պայմանագրի 1-ին կետով սահմանված աշխատանքների համար վարձավճարը կազմում է 999.000 (ինը հարյուր իննսունինը հազար) դրամ:

2.2 Վարձավճարը ենթակա է վճարման՝ փոխանցման հաշիվը ներկայացնելուց 3 օրվա ընթացքում:

3.Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը և ժամկետները

3.1. Գույքագրման և Գնահատման աշխատանքները կատարվելու են 17.03.2018թ. մինչև 15.04.2018թ. ընկած ժամանակահատվածում:

3.2. Սույն պայմանագրով Գույքագրման և Գնահատման աշխատանքների ավարտման ամսաթիվ է համարվում Պատվիրատուին՝ սույն պայմանագրի 1 կետին

համապատասխան Գույքագրման և Գնահատման հաշվետվության տրամադրման և Կողմերի կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման ամսաթիվը:

3.3. Գույքագրման և Գնահատման աշխատանքների հանձնման-ընդունման ակտի ստորագրումից Պատվիրատուի հիմնավորված հրաժարման դեպքում Կողմերը կազմում են անհրաժեշտ լրացումների կատարման երկկողմանի ակտ, որում նշվում են բացահայտված թերությունների վերացման ժամկետները:

3.4. Գույքագրման և Գնահատման աշխատանքների արդյունքների նկատմամբ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը փոխանցվում է Պատվիրատուին սույն պայմանագրով սահմանված կարգով բոլոր վճարումները Գնահատողի հաշվարկային հաշվին կատարվելուց հետո:

4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4.1. Կատարողը պարտավորվում է՝

4.1.1. Կողմերի կողմից համաձայնեցված և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում իրականացնել սույն պայմանագրի 1 կետում սահմանված կարգով գույքագրման և գնահատման աշխատանքները:

4.1.2. Մինչև Գույքագրման և Գնահատման աշխատանքների հանձնման-ընդունման ակտի՝ Կողմերի կողմից ստորագրումը տրամադրել Պատվիրատուին Գույքագրման և Գնահատման հաշվետվություն՝ սույն Պայմանագրի 1 կետին համապատասխան և սույն Պայմանագրի 3.1. կետում նշված ժամկետում:

4.1.3. Իր ուժերով և իր միջոցներով վերացնել Գույքագրման և Գնահատման աշխատանքներում իր մեղքով թույլ տրված թերությունները:

4.1.4. Սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան Գույքագրման և Գնահատման աշխատանքների շարունակման անհնարինության բացահայտման դեպքում 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում տեղեկացնել Պատվիրատուին:

4.1.5. Չբացահայտել սույն Պայմանագրի կատարման համար Պատվիրատուի տրամադրած կոնֆիդենցիալ տեղեկատվությունը և տվյալները, առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության չբացահայտել և չտրամադրել երրորդ կողմին գնահատման գործընթացին առնչվող փաստեր և տեղեկատվություն (բացառությամբ ընդհանուր բնույթի տեղեկատվությունից):

4.2. Կատարողն իրավունք ունի

4.2.1. Պահանջել Պատվիրատուից մատուցված ծառայությունների դիմաց վճարումը՝ սույն պայմանագրի պահանջներին համապատասխան:

4.2.2. Պահանջել Պատվիրատուից Գույքագրման և Գնահատման հաշվետվության կազմման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվության տրամադրում:

4.2.3. Գույքագրման և Գնահատման աշխատանքները իրականացնելու նպատակով Կատարողն իրավունք ունի ներգրավել սեփական մասնագետների, ինչպես նաև այլ անկախ կազմակերպությունների մասնագետների, որոնց նկատմամբ կիրառվում է նաև սույն պայմանագրի 4.1.5.կետի պահանջները:

4.3.Պատվիրատուն պարտավորվում է՝

4.3.1. Սույն պայմանագրի 2.1. և 2.2. կետերին համապատասխան վճարել Կատարողին Գույքագրման և Գնահատման աշխատանքների դիմաց՝ սահմանված ժամկետներում:

4.3.2. Ապահովել Կատարողին Գույքագրման և Գնահատման հաշվետվության կազմման համար անհրաժեշտ տեղեկատվությամբ: Եթե Պատվիրատուն թույլ տա վերը նշված փաստաթղթերի տրամադրման սույն Պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացում, ապա սույն Պայմանագրով ծառայությունների մատուցման ժամկետը համապատասխանաբար երկարացվում է Պատվիրատուի կողմից փաստաթղթերի տրամադրման ուշացման օրերի քանակով:

4.4.Պատվիրատուն իրավունք ունի

4.4.1. Հրաժարվել սույն պայմանագրի պայմանների կատարումից այն դեպքում, եթե Կատարողը ոչ հարգելի պատճառներով Կողմերի կողմից սահմանված ժամկետներում չի սկսել սույն պայմանագրի պայմանների կատարումը (սույն պայմանագրի 3.1. կետ):

4.4.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի աշխատանքների ընթացքը, առանց միջամտելու նրա գործունեությանը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Գույքագրման և Գնահատման հաշվետվությունն իրենից ներկայացնում է Կատարողի կարծիքը՝ առանց այդ գույքի հետագա իրացման պայմանների վերաբերյալ երաշխիքների:

5.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում այն եզրակացությունների համար, որոնք կատարվել են ոչ հավաստի տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և տեղեկատվության հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողն իր

մասնագիտական որակավորմանը համապատասխան կարող էր բացահայտել տեղեկությունների ոչ հավաստի լինելը:

6. Պատասխանատվությունից ազատում

6.1. Կողմերն ազատվում են սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունից սույն պայմանագրով սահմանված Կողմերի պարտականությունների իրականացման վրա ազդող անհաղթահարելի ուժի ծագման դեպքում, որոնք Կողմերից և ոչ մեկը ի վիճակի չէ ոչ կանխատեսել, ոչ էլ կանխարգելել խելամիտ միջոցներով:

6.2. Անհաղթահարելի ուժին են վերաբերում այն իրադարձությունները, որոնց վրա չեն կարող ազդել Կողմերը և որոնց առաջացման համար նրանք պատասխանատվություն չեն կրում, օրինակ՝ երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթորիկներ և այլ տարերային աղետներ, պատերազմներ, ռազմական գործողություններ, հրդեհներ, վթարներ, ինչպես նաև պետ. կառավարման մարմինների որոշումներն ու հրահանգները:

6.3. Կողմը, որն ի վիճակի չէ իրականացնել սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները՝ կապված անհաղթահարելի ուժի առաջացման հետ, պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել մյուս Կողմին այդ իրավիճակների առաջացման մասին գրավոր ձևով, տալ գնահատական սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման և կատարման հնարավոր ժամկետների վրա նրանց ազդեցության վերաբերյալ:

6.4. Անհաղթահարելի ուժի իրավիճակի առաջացման դեպքում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգվում է նման իրավիճակների և նրանց հետևանքների տևողության չափով:

7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագրի պայմանները, այդ թվում փոխադարձ հաշիվների կարգը և ձևը, հանդիսանում են կոնֆիդենցիալ տեղեկատվություն և Կողմերի կողմից երրորդ անձանց տեղեկացման ենթակա չեն:

7.2. Վեճերը, որոնք կարող են ծագել սույն պայմանագրի կատարման ընթացքում, կլուծվեն բանակցությունների միջոցով, իսկ Կողմերի միջև անհամաձայնության դեպքում հարցը կլուծվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագիրը համարվում է կնքված Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով Կողմերի կողմից իրենց բոլոր պարտականությունների կատարումը:

7.4. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ դադարեցվել մինչև Կողմերի կողմից իրենց պարտականությունների լրիվ կատարումը՝ միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Սույն պայմանագրի հավելվածները, փոփոխությունները և/կամ լրացումները պետք է ձևակերպվեն որպես լրացում և ստորագրվեն Կողմերի կողմից:

7.5. Սույն Պայմանագիրը կազմված է 2 հավասարազոր օրինակներից՝ հայերեն լեզվով:

8. Կողմերի իրավաբանական հասցեները և բանկային վավերապայմանները

«ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	«Արթին Էնթրփրայս» ՍՊԸ
Հասցե՝ Լոռու մարզ, Ստեփանավան Սոս Սարգսյան փող., 1 շենք	Հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի պողոտա 51
ՀՎՀՀ՝ 06954104	ՀՎՀՀ 00005191
Բանկ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ Զարգացում մ/ճ
Բանկային հաշվեհամար՝ 900252101440	Բանկային հաշվեհամար՝ 1510036877210100
Համայնքի ղեկավար՝	Գլխավոր տնօրեն՝
Մ.Ղարաբեշիշյան_____	Հ. Անտոնյան_____